ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«07» «հեկտեմբեր» 2024թ. ՆՄՈ/74-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ և 98-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի նոյեմբերի 30-ի N2530-Ա հրամանը, 2023 թվականի դեկտեմբերի 5-ի ՈԳՍ/20.1/37297-2023 և 2024 թվականի հունվարի 24-ի ՈԳՍ/20.1/2338-2024 գրությունները.

որոշում եմ՝

1. Հաստատել 2024 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում իրականացվելիք իրավական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը, իրավական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Իրավական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N03-Ն հրամանով հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության հարցաշարով:
3. Անհրաժեշտության դեպքում իրավական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Աշխատանքային խմբի ղեկավարին (Գ. Հովհաննիսյան)՝ Բաղրամյան համայնքում իրավական հսկողության աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Սերյոժա Գրիգորյանին:
5. Աշխատանքային խմբի ղեկավարին (Գ. Հովհաննիսյան)՝ Բաղրամյան համայնքում իրավական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Գ. Հովհաննիսյանին՝ առաջին եռամսյակի ընթացքում իրավական հսկողություն իրականացնելուց հետո 1-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված իրավական հսկողության արդյունքները:
7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Խ. Մկրտչյանին:
8. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (գլխավոր մասնագետ՝ Ա. Համբարձումյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:
9. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը (պետ՝ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024.02.07 15:14:38 GMT+4
Համակարգված է էլեկտրոնային կողմից

eID

ՄԱՐԶՊԵՏ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2024 թվականի փետրվարի07-ի
N ՄՈ/79 -Ա որոշման

2024 թվականի առաջին եռամսյակի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում իրականացվելիք իրավական հսկողության բնագավառը, իրավական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	Համայնքի անվանում	Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակահատվածը	Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ	Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
1.	Բաղրամյան համայնք	փետրվար-մարտ	Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի ընդհանուր լիազորությունների բնագավառ, այդ թվում՝ ***համայնքի ղեկավարի լիազորությունները հետևյալ բնագավառներում՝*** ***Քաղաքացիների, տնտեսավարող սուբյեկտների, տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության.*** ***Ֆինանսների.*** ***Պաշտպանության կազմակերպման և արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և***	Աշխատանքային խմբի ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ. Աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ.	Գոռ Հովհաննիսյան Լիաննա Հարությունյան

			քաղաքացիական պաշտպանության կազմակերպման. *Քաղաքաշինության, կոմունալ տնտեսության և հողօգտագործման, տրանսպորտի, առևտրի և ծառայությունների.* *Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի.* *Առողջապահության.* *Սոցիալական պաշտպանության.* *Գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի.* *Շրջակա միջավայրի պահպանության և զբոսաշրջության:*	Աշխատանքային խմբի անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր ինժեներ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր ճարտարագետ-շինարար. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ.	Խորեն Սարուխանյան Ռաֆիկ Երվանդյան Գևորգ Գևորգյան Արշակ Ղորղանյան Արայիկ Հակոբյան

				Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ.	Ասթինե Ապիտոնյան
				Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ.	Ցողիկ Սարգսյան
				Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ.	Արմեն Դարբինյան
				Հայաստանի Հանրապետության Արմավիրի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ.	Լիլիթ Մուշեղյան
				Հայաստանի Հանրապետության Արմավիրի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ.	Անդրանիկ Լալայան
				Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ.	Արմեն Թովմասյան

				Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ:	Արթուր Այվազյան

07.02.2024

VERIFIED OCSP 07.02.2024 09:05:31 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ